

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ:  
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

**Մանուկ Հովհաննեսի Մուրադյան**

ի.գ.թ., դոցենտ

ՀՀ ոստիկանության կրթահամալիր

manukmuradyan@rambler.ru

**Ամփոփագիր**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ վարչ. դատ. օր.) 8-րդ գլուխը նվիրված է դատական հանձնարարությունների ինստիտուտին: Ամենաընդհանուր բնորոշմամբ՝ դատական հանձնարարությունը ՀՀ վարչ. դատ օր-ով նախատեսված վարչական դատարանի (սահմանադրական դատարանի) կողմից իրականացվող դատավարական գործողություն է (հանձնարարություն)՝ ուղղված համապատասխանաբար կոնկրետ նստավայրի վարչական դատարանին կամ սահմանադրական դատարանի հանձնարարության պարագայում՝ վարչական դատարանին՝ կատարելու որոշակի դատավարական գործողություններ՝ ապացույցներ ձեռք բերելու նպատակով:

Դատական հանձնարարության ինստիտուտը դժվար հասանելի ապացույցների ձեռքբերման և հետազոտման մեխանիզմ է: Այն դատավարական սուբյեկտիվ իրավունքների իրացման ապահովման երաշխիք է: Դատարանի նման լիազորությունը (ինչպես սահմանադրական, այնպես էլ վարչական արդարադատության շրջանակներում), ըստ էության, ուղղված է գործի շրջանակներում մասնավոր և հանրային շահերի հարաբերակցության ճիշտ գնահատմանը: Մեծ հաշվով, դատական հանձնարարության ինստիտուտը դատարանի կողմից ապացույցների անմիջական հետազոտման անհնարինության հաղթահարման միջոց է, գործի քննությունը ժամանակին իրականացնելու գործիք՝ ուղղված արդարադատության արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ վարչ. դատ. օր. 8-րդ գլխի շրջանակներում (հոդված 49, 50) կարգավորված են դատավարական կոնկրետ կառուցակարգի երկու ինքնուրույն տեսակները, որոնք սկզբունքորեն միմյանցից տարբերվում են դատավարական հանձնարարություն տվող սուբյեկտով և համապատասխան դատավարության ոլորտով. մի դեպքում՝ խոսքը վարչական դատարանի և դատավարության, մյուս դեպքում՝ սահմանադրական դատարանի և դատավարության շրջանակներում վարչական դատարանին կամ համապատասխան նստավայրի վարչական դատարանի տրվող հանձնարարության մասին է: Սույն հոդվածի շրջանակներում վերլուծության են ենթարկվելու վարչական դատարանի հանձնարարության ինստիտուտի տեսական և գործնական առանձին հարցեր:

**Հիմնաբառեր.** Վարչական դատարան, հանձնարարություն, ապացույց, ապացույցների հետազոտում:

**Ներածություն**

**Վարչական դատարանի հանձնարարության էությունը և գործառույթը:** Օրենքի իմաստով դատական հանձնարարությունը դատավարական գործողություն է, որն իրականացվում է իրավասու դատարանի միջանկյալ վարույթային որոշում ընդունելու ձևով: Հատկանշական է, որ դատական հանձնարարությունները կարող են տրվել միայն վարչական դատարանին: Այլ կերպ՝ ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի իմաստով դատական հանձնարարության ինստիտուտը հնարավոր է բացառապես վարչական դատավարության շրջանակներում:

Վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի 1-ին մասի փաստակազմի հատկանիշների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ դատական հանձնարարությունն այնպիսի ապացույց ձեռք բերելու ձև է, որը գտնվում է Հայաստանի Հանրապետության մեկ այլ մարզի տարածքում: Հատկանշական է, որ նորմի տեքստային մեկնաբանությունից չի երևում, սակայն բովանդակային իմաստով դատարանը նման հանձնարարություն տալու մասին որոշում կայացնում է այն պատճառով, որ ինքն անձամբ չի կարող դրանք ձեռք բերել: Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատարանն անմիջականորեն է իրականացնում ապացույցների հետազոտման գործընթացը (դրանց ընկալումը), եթե անգամ ապացույցների ուսումնասիրությունն իրականացվում է դրանց գտնվելու վայրում [Մեղրյան, 206]:

ՀՀ վարչ. դատ. օր. 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների *հետազոտման* և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը: ՀՀ վարչ. դատ. օր. 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր

ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ *հետազոտման* վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն՝ ապացույցների անմիջական հետազոտումը, ըստ էության, գործը քննող դատարանի պարտականությունն է, սակայն օրենսդիրը սահմանել է ընդհանուր կանոնից բացառություն՝ գործը քննող դատարանին տալով լիազորություն ՀՀ մեկ այլ մարզի տարածքում ապացույցներ ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում հանձնարարելու համապատասխան նստավայրի վարչական դատարանին՝ կատարելու որոշակի դատավարական գործողություններ (ապացույցների անմիջական հետազոտում), եթե դա առավել արդյունավետ կդարձնի գործի քննությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական հանձնարարության գործառույթն **ապացույցը** տեղում հետազոտելն է, նշանակում է, որ դատարանն իրավունք ունի դատական հանձնարարության մասին որոշում կայացնելու՝ բացառապես ՀՀ վարչ. դատ. օր. 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապացույցների վերաբերությամբ: Մասնավորապես, հոդվածի մասի համաձայն՝ այդպիսի ապացույցներ կարող են լինել **վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը (ցուցմունքը), գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները:**

Կարևոր է հստակեցնել այն հարցը, թե դատական հանձնարարություն վարչական դատարանը կարող է տալ նաև գործը դատաքննության նախապատրաստելու՝, թե՛ միայն դատաքննության փուլում: ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի բովանդակությունից չի երևում հարցադրման պատասխանը: Առանձին նորմերի համակարգային մեկնաբանությունը թույլ է տալիս արձանագրել, որ դատական հանձնարարությունը կարող է

տրվել **և՛ գործը դատաքննության նախապատրաստելու, և՛ դատաքննության ընթացքում:** Այսպես՝ ՀՀ վարչ. դատ. օր. 89-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելիս վարչական դատարանը պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխանն ստանալուց հետո, իսկ այդպիսին չստանալու դեպքում՝ պատասխան ուղարկելու համար նախատեսված ժամկետի ավարտից հետո, դատաքննությունն արդյունավետ իրականացնելու նպատակով կարող է հրավիրել նախնական դատական նիստ: Վարչական դատարանը, հոդվածի 3-րդ մասի (ի թիվս այլ գործողությունների) 10-րդ կետի համաձայն, *նախնական դատական նիստում իրականացնում է գործի արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական դատարանի հանձնարարության նպատակը, ըստ էության, գործի քննությունն արդյունավետ դարձնելն է, կարծում ենք, որ դատարանը 10-րդ կետով սահմանված լիազորության հիման վրա կարող է տրալ դատական հանձնարարություն նաև գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում:

Հատկանշական է, որ ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի իմաստով միակ փաստական հանգամանքը, որի առկայության պարագայում կարող է վրա հասնել գործը քննող դատարանի՝ ՀՀ մեկ այլ մարզի տարածքում որոշակի դատավարական գործողություններ կատարելը համապատասխան մարզի նստավայրի վարչական դատարանին հանձնարարելու լիազորությունը (իրավական հետևանք), ապացույց ձեռք բերելու անհրաժեշտությամբ պայմանավորված, **գործի քննությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակի առկայությունն է:** Քննարկվող համատեքստում գործի քննության արդյունավետությունն անհրաժեշտ է դիտարկել ապացույցների

ձեռքբերման և գնահատման տեսանկյունից: ՀՀ վարչ. դատ. օր. 27-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Իրավունքի գերակայության պահանջներից է նաև իրավասու և գործունակ դատարանների առկայությունը, որոնք կիրականացնեն միջազգային չափանիշներին համապատասխան սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանն ուղղված արդյունավետ արդարադատություն: Արդարադատության իրականացման արդյունավետության տեսանկյունից առավելապես կարևորվում է վեճի սպառնիչ լուծումը, ինչն առանց ապացույցների բազմակողմանի և լրիվ հետազոտման հնարավոր չէ:

**Վկայի գտնվելու վայրում դատական հանձնարարության կարգով վկայից ցուցմունք վերցնելու հիմքերը և կարգը:** Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի իմաստով ցանկացած ապացույց ստանալու համար դատարանը կարող է կայացնել որոշում դատական հանձնարարություն տալու մասին, այնուամենայնիվ, պոզիտիվ մակարդակում սահմանված են այլ մարզի նստավայրի վարչական դատարանի կողմից դատական հանձնարարության կարգով վկայից ցուցմունք վերցնելու հիմքերը:

ՀՀ վարչ. դատ. օր. 35-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ վկայից ցուցմունք վերցնելը կարող է կատարվել նաև վկայի գտնվելու վայրում դատական հանձնարարության միջոցով, եթե՝ (1) վկայից տեղում ցուցմունք վերցնելը կնպաստի ճշմարտության բացահայտմանը. (2) վկայի ներկայանալը դատաքննությանը, իր հաղորդելիք տեղեկատվության համատեքստում, նպատակահարմար չէ մեծ հեռավորության պատճառով. (3) վկան հիվանդու-

թյան, տկարության կամ այլ պատճառով ի վիճակի չէ կամ իրավունք չունի լքելու իր գտնվելու վայրը: Գրեթե համարժեք կարգավորում է առկա ՀՀ քաղ. դատ. օր-ում: Օրենսգրքի 70-րդ հոդվածը սահմանում է դատական հանձնարարության կարգով վկայի հարցաքննության իրականացման դատավարական հիմքերը և կարգը: Հոդվածի համաձայն՝ վկան կարող է իր բնակության վայրի առաջին ատյանի դատարանի կողմից հարցաքննվել դատական հանձնարարության կարգով, եթե. (1) վկայի ներկայանալը դատաքննությանը նպատակահարմար չէ մեծ հեռավորության պատճառով, (2) վկան հիվանդության կամ այլ պատճառով ի վիճակի չէ լքել իր գտնվելու վայրը: ՀՀ վարչ. դատ. օր. 35-րդ հոդվածի 18-րդ մասի 1-3 կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկի բացակայության պարագայում վկայից չի կարող ցուցմունք վերցվել դատական հանձնարարության կարգով: Ինչ վերաբերում է ՀՀ քաղ. դատ. օր-ի, ըստ էության, համանման կարգավորմանը, ապա պետք է արձանագրել, որ ՀՀ քաղ. դատ. օր-ով, ի ապահովում դատարանի կողմից գործում առկա ապացույցներն անմիջականորեն հետազոտելու սկզբունքի, ներդրվել է նաև վկայի, փորձագետի և մասնագետի հարցաքննությունը՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ իրականացնելու ինստիտուտը՝ **որպես ապացույցի սրացման նոր ձև**: Ըստ էության՝ օրենսդիրը չի սահմանել տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցով հոդվածում նշված սուբյեկտների հարցաքննությունն իրականացնելու պարտադիր պայման: Կարևորելով ապացույցների անմիջական հետազոտման անհրաժեշտությունը՝ քաղաքացիական գործի քննության ընթացքում, թեև առկա են դատական հանձնարարության կարգով ապացույց ստանալու հիմքերը (տեխնիկապես անհնար չլինելու

պարագայում), դատարանը ողջամիտ ժամկետներում գործի արագ և արդյունավետ լուծման տեսանկյունից կաշկանդված է տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցով այն իրականացնելու պարտականությամբ: Արդարադատության արդյունավետության բարձրացման և դատարանի կողմից ապացույցներն անմիջականորեն հետազոտելու սկզբունքի ապահովման նկատառումներից ելնելով, կարծում ենք՝ ՀՀ վարչ. դատ. օր-ով ևս անհրաժեշտ է սահմանել վկայի, փորձագետի ցուցմունքը տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցներով վերցնելու կարգ:

ՀՀ վարչ. դատ. օր. 35-րդ հոդվածի 18-րդ մասում օգտագործվող «գտնվելու վայր» հասկացությունը պարզաբանման կարիք ունի: Վարչական դատարանի իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ, որպես կանոն, վկայից ցուցմունք վերցնելու վերաբերյալ դատական հանձնարարությունները տրվում են վկայի հաշվառման վայրի ՀՀ վարչական դատարանի նստավայրին: Այս տեսանկյունից խնդիրն անհրաժեշտ է պարզաբանել «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում: «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ մշտական բնակության վայր (կացարան) է համարվում այն տարածքը, որտեղ բնակիչն ունի բնակվելու իրավունք, որը նա համարում և հայտարարում է որպես իր կացարան: Ռեգիստրում ընդգրկվելու համար ՀՀ բնակիչը պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան տեղական ռեգիստրին տրամադրել իր մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն: Բնակիչը կարող է հաշվառվել միայն մեկ կացարանում: Գործը քննող դատարանը, եթե վկայի գտնվելու վայրի վերաբերյալ այլ տեղե-

կատվություն չունի, ապա դատական հանձնարարականը պետք է արձակի ըստ հաշվառման վայրի (գտնվելու վայրի) վարչական դատարանի նստավայրին: Այսինքն, օրենքի իմաստով գտնվելու վայրը և հաշվառման վայրը համընկնում են: Սակայն պրակտիկայում, եթե հաշվի առնենք վկայից դատական հանձնարարության կարգով ցուցմունք վերցնելու հիմքերը (օրինակ՝ վկայի ներկայանալը դատաքննությանը նպատակահարմար չէ մեծ հեռավորության պատճառով, վկան հիվանդության, տկարության կամ այլ պատճառով ի վիճակի չէ կամ իրավունք չունի լքելու իր գտնվելու վայրը), ապա ակնհայտ է, որ հանձնարարություն տվող դատարանն օբյեկտիվորեն պետք է տեղեկացված լինի վկայի գտնվելու վայրի մասին (օրինակ՝ հիվանդության պատճառով հաշվառման վայրի մարզից դուրս մեկ այլ մարզում կամ քաղաքում հիվանդանոցային կամ ստացիոնար բուժման պայմաններում գտնվող վկայի պարագայում), և հանձնարարությունը կարող է տրվել փաստացի վկայի գտնվելու վայրի վարչական դատարանի նստավայրին՝ նշելով հաշվառումից դուրս վկայի փաստացի գտնվելու վայրը:

**Դատական հանձնարարության կարգով իրեղեն ապացույցների զննման հնարավորությունը:** Ինչպես նշվել է, ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի իմաստով ցանկացած ապացույց ստանալու համար դատարանը կարող է կայացնել որոշում դատական հանձնարարություն տալու մասին, այնուամենայնիվ, պոզիտիվ մակարդակում հատուկ կարգավորումներ նախատեսված են միայն այլ մարզի նստավայրի վարչական դատարանի կողմից դատական հանձնարարության կարգով *վկայի ցուցմունք վերցնելու հիմքերի առնչությամբ*: Ինչպես գիտենք, ապացույցի ինքնուրույն տեսակ է իրեղեն ապացույցը: ՀՀ վարչ. դատ. օր. 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրեղեն ապացույցներ են նյութա-

կան աշխարհի այն օբյեկտները, որոնք իրենց առկայությամբ, դրությամբ, արտաքին տեսքով, ներքին հատկություններով, գտնվելու վայրով կամ այլ հատկանիշներով կարող են գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի հաստատման միջոց դառնալ: Հոդվածի 6-րդ մասը սահմանում է իրեղեն ապացույցների հետազոտման դատավարական կարգը: Մասնավորապես՝ իրեղեն ապացույցները հետազոտվում են զննման միջոցով: ՀՀ վարչ. դատ. օր. 47-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ զննումը, որպես կանոն, կատարվում է դատարանում: Եթե զննման օբյեկտը հնարավոր չէ տեղաշարժել, կամ դրա տեղափոխումը դատարան կապված է անհամաչափ դժվարությունների կամ ծախսերի հետ, ապա զննումը դատարանը կատարում է տեղում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զննումը տեղում կատարելիս պահպանվում է դատական նիստի համար սույն օրենսգրքով սահմանված կարգը: Զննումը տեղում կատարելիս ժամանակի և վայրի մասին դատավարության մասնակիցները ծանուցվում են, սակայն նրանց չնեղականալն արգելք չէ զննումը կատարելու համար: Դիտարկվող նորմերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ չկան դատական հանձնարարության կարգով իրեղեն ապացույցների զննման հատուկ հիմքեր (ինչպես վկայի ցուցմունքի պարագայում) և դատավարական հատուկ կարգ: Նշված կարգավորումներն սկզբունքորեն վերաբերելի են կոնկրետ նստավայրի վարչական դատարանի կողմից իր դատական տարածքում գտնվող իրեղեն ապացույցները դատարանի շենքայի տարածքից դուրս զննելուն: Այլ է իրավիճակը, երբ զննման ենթակա իրեղեն ապացույցը գտնվում է այլ նստավայրի վարչական դատարանի դատական տարածքում: Այն, որ դատական հանձնարարության գործառույթն **ապացույցը** տեղում հետազոտելն է,

և, ընդհանուր կանոնի համաձայն, այն ուղղված է մեկ այլ մարզի տարածքում ապացույցներ ձեռք բերելուն, և կարևորելով այն հանգամանքը, որ եթե զննման օբյեկտը հնարավոր չէ տեղաշարժել, կամ դրա տեղափոխումը դատարան կապված է անհամաչափ դժվարությունների կամ ծախսերի հետ, ապա զննումը դատարանը կատարում է տեղում՝ **անկախ այն հանգամանքից, որ գործող վարչադատարարական օրենսդրությամբ նախատեսված չեն դատական հանձնարարության կարգով իրեղեն ապացույցները տեղում (փաստացի այլ մարզի տարածքում) զննելու վերաբերյալ հատուկ կարգավորումներ**, կարծում ենք՝ ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի դատական հանձնարարությանը վերաբերող ընդհանուր կարգավորումները թույլ են տալիս արձանագրել, որ վարչական դատարանն իրավասու է հանձնարարելու համապատասխան նստավայրի վարչական դատարանին՝ կատարելու *իրեղեն ապացույցի զննում դատավարական գործողությունը՝* պայմանով՝ եթե դա առավել արդյունավետ կդարձնի գործի քննությունը:

**Վարչական դատարանի դատական հանձնարարության մասին որոշումը: հանձնարարության պարտադիրությունը և կատարումը:** Վարչական դատարանը դատական հանձնարարությունը ձևակերպում է համապատասխան որոշմամբ (դատական հանձնարարություն տալու մասին), որում ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համառոտ շարադրվում են քննվող գործի էությունը, նշվում են ապացուցման ենթակա փաստերը և այն ապացույցները, որոնք պետք է ձեռք բերի հանձնարարություն կատարող դատարանը: Նշված իրավանորմն ամենաընդհանուր ձևով որոշակիացնում է որոշման բովանդակությունը և բացի հանձնարարության շրջանակներում ապացուցման ենթակա փաստերի և հանձնարարությունը

կատարող դատարանի կողմից ձեռքբերման ենթակա ապացույցների վերաբերյալ նշումներից, պարտադիր է նաև (որոշում կատարող դատարանին գործի վերաբերյալ իրազեկելու տրամաբանությունից ելնելով) որոշման մեջ քննվող գործի էության համառոտ ներկայացումը (*«ՀՀ վարչ. դատ. օր. 123-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դատական ակտում առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման, լրացուցիչ վճռի կայացման, վճռի պարզաբանման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»*):

Հատկանշական է, որ գործի համառոտ ներկայացում ասելով պրակտիկայում ընդունված է հասկանալ և, որպես կանոն, հանձնարարության վերաբերյալ որոշումների մեջ նկատի է ունեցվում գործի՝ ինչպես մինչդատական, այնպես էլ դատական վարույթի ընթացքում կատարված գործողությունները, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը կարևոր է տրված հանձնարարությունն ըստ էության իրականացնելու համար: Մասնավորապես՝ որոշման մեջ նշվում է հայցվորի կողմից գործը քննող դատարանին ուղղված նյութաիրավական պահանջը, վեճի առարկայի բովանդակությունը, դատարանի գործողությունները՝ կապված հայցադիմումը վարույթ ընդունելու, այն վերադարձնելու, ապացույց պահանջելու և այլ դատավարական ընթացակարգերի հետ: Որոշման մեջ նշվում են նաև դատարանին նման լիազորություն տվող իրավական հիմքերը:

Ինչ վերաբերում է հանձնարարության վերաբերյալ որոշման օրինական ուժի մեջ մտնելու և այն բողոքարկելու հետ կապված հարցե-

րին, ապա ՀՀ վարչ. դատ. օր. «Վարչական դատարանի դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը» վերտառությամբ 127-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ բողոքարկման ոչ ենթակա միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: Իսկ 131-րդ հոդվածում թվարկված են վարչական դատարանի բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը, որոնց շրջանակում (կամ այլ կարգավորումներում) բացակայում է *դատական հանձնարարություն տալու վերաբերյալ միջանկյալ դատական ակտի տեսակը*: Նորմերի համակարգային մեկնաբանման արդյունքում պարզ է դառնում, որ դատական հանձնարարություն տալու մասին որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Հանձնարարությունը պարտադիր է այն ստացած դատարանի համար և պետք է կատարվի այն ստանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում: ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով, շաբաթներով կամ օրերով հաշվարկվող դատավարական ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, շաբաթվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է այդ ժամկետի սկիզբը: Փաստացի, երկշաբաթյա ժամկետը հոսում է ոչ թե ստանալու, այլ դրան հաջորդող օրվանից: Դատական հանձնարարության կատարման համար երկշաբաթյա ժամկետ է նախատեսված նաև քաղաքացիական դատավարության շրջանակներում վկայի հարցաքննությունը դատական հանձնարարության կարգով իրականացնելու դեպքում: Հատկանշական է, որ այլ պետությունների օրենսդրությունները դատական հանձնարարության կարգով ապացույցների ձեռքբերման համար նախատեսում են տարբեր ժամկետ-

ներ: Օրինակ՝ ՌԴ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատական հանձնարարության կատարման համար նախատեսված է մեկամսյա ժամկետ: Իսկ, օրինակ, ՌԴ արբիտրաժային դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածը նախատեսում է 10-օրյա ժամկետ [Борисов, Лагвилава, 132-133]:

ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանձնարարությունը կատարվում է դատական նիստում՝ սույն օրենսգրքով սահմանված կանոններով: Իրավանորմի նպատակը կոնկրետ ապացույցը դատական հանձնարարության կարգով ձեռք բերելիս այդ տեսակի ապացույցի ձեռքբերման և ամրագրման դատավարական կարգի և սկզբունքների կիրառության վրա շեշտադրում կատարելն է: Այլ կերպ՝ օրենսդիրը հանձնարարության կարգով ապացույց ձեռք բերելու հատուկ կարգավորումներ չի նախատեսել: Այսպես օրինակ՝ եթե անհրաժեշտ է դատական հանձնարարության կարգով վկայից ցուցմունք վերցնել, ապա հանձնարարություն ստացած դատարանը պետք է այն իրականացնի՝ պահպանելով ՀՀ վարչ. դատ. օր. 32-36-րդ հոդվածների կանոնները: Վկայից ցուցմունք վերցնելու ընդհանուր կարգի համաձայն՝ դատարանը վկա հրավիրում է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ: Վկա հրավիրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելիս նշվում է այն փաստը, որի վերաբերյալ վկան պետք է հարցաքննվի, ինչպես նաև նշվում են վկայի անունը, ազգանունը, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների դեպքում՝ նաև հայրանունը (այսուհետ՝ անուն) և հասցեն: Դատական հանձնարարության շրջանակներում վկայից ցուցմունք վերցնելու պարագայում 32-րդ հոդվածի կանոնները գործում են այնքանով, որքանով չի խեղվում քննարկվող ինստիտուտի դատավարական էությունը: Մասնա-

վորապես՝ հաշվի առնելով դատական հանձնարարության առկայությունը, հանձնարարություն ստացող դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ չի կարող վկայից ցուցմունք վերցնել. այն իրականացվում է հանձնարարության ուժով: Ձևական իրավաբանական իմաստով հանձնարարություն կատարող դատարանը նախաձեռնողականություն չի դրսևորում, այլ իրականացնում է հանձնարարությունը: Ընդհանուր կարգի համաձայն՝ վկայից ցուցմունք վերցնելու պարագայում վկային հրավիրելու պարտականություն կրում է հենց ցուցմունք վերցնող դատարանը, իսկ հանձնարարության առկայության պարագայում՝ հանձնարարություն կատարող դատարանը: Հանձնարարության շրջանակներում վկան դատարան է կանչվում դատական ծանուցման հիման վրա, որում նշվում են դատարան չներկայանալու իրավական հետևանքները: Վկան պարտավոր է ներկայանալ հանձնարարություն կատարող դատարանի կանչով: Եթե սահմանված կարգով ծանուցված վկան չի ներկայանում դատական նիստին, ապա հանձնարարություն կատարող դատարանը կարող է վկային բերման ենթարկելու որոշում կայացնել՝ նրա վրա դնելով չներկայանալու հետևանքով առաջացած ծախսերը: Մինևույն ժամանակ, նրա նկատմամբ կարող է նշանակվել դատական տուգանք՝ օրենքով սահմանված կարգով: Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատական տուգանքի նշանակումը և ծախսերի հատուցման պարտականություն դնելը, ինչպես նաև բերման ենթարկելու մասին որոշումը վերացվում են, եթե վկան ապացուցում է, որ նա ժամանակին չի ստացել ծանուցումը, կամ նրա բացակայության պատճառը հարգելի է եղել:

Հանձնարարությունը կատարելու մասին կայացվում է որոշում, որը բոլոր նյութերի հետ անհապաղ ուղարկվում է գործը քննող դատարան: Ինչպես գիտենք, դատական

հանձնարարության կատարման համար սահմանված է երկշաբաթյա ժամկետ: Պրակտիկայում հնարավոր է, որ հանձնարարություն կատարող դատարանը տարբեր պատճառներով չկարողանա սահմանված ժամկետներում ծանուցել վկային՝ հանձնարարության կարգով ցուցմունք տալու վերաբերյալ: Այստեղ հարց է առաջանում հանձնարարությունը սահմանված ժամկետներում չկատարելու կամ կատարման անհնարինության այլ իրավիճակների վերաբերյալ: Դատական հանձնարարության վերաբերելի նորմերը չեն նախատեսում նման իրավիճակներում հանձնարարություն կատարող դատարանի գործողությունների շրջանակը: ՀՀ վարչ. դատ. օր. 49-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *հանձնարարությունը կատարելու մասին կայացվում է որոշում*, որը բոլոր նյութերի հետ անհապաղ ուղարկվում է գործը քննող դատարան: Պարզ տեքստային մեկնաբանման արդյունքում կարելի է արձանագրել, որ կարգավորումը վերաբերում է միայն հանձնարարության կատարմանը և դրա վերաբերյալ որոշում կայացնելուն: Հաշվի առնելով քննարկվող իրավանորմի նպատակը և գործառույթը, ինչպես նաև գործի քննության արդյունավետության և արդարադատության շահը, հիմնահարցն անհրաժեշտ է դիտարկել նպատակային մեկնաբանման համատեքստում կամ կարգավորման բացը լրացնել օրենքի անալոգիայի (միջճյուղային) միջոցով: Այսպես՝ ի տարբերություն ՀՀ վարչ. դատ. օր-ի, ՀՀ քաղ. դատ. օր-ի 70-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատական հանձնարարության կատարման **կամ դրա անհնարինության մասին կայացվում է որոշում**, որը դատական նիստի արձանագրության հետ անհապաղ ուղարկվում է գործը քննող առաջին ատյանի դատարան: Համանման իրավիճակներում (հանձնարարության կատարման անհնարինության պարագա-

յում) հանձնարարություն կատարող Դատարանը կարող է անալոգիայի կարգով կիրառել ՀՀ քաղ. դատ օր-ի նշված իրավակարագավորումը: Պրակտիկայում հանձնարարության կատարման անհնարինությունը կարող է կապված լինել տարբեր պատճառների հետ, օրինակ՝ վկային չծանուցել (դրա անհնարինությունը) հանձնարարության կարգով ցուցմունք տալու վերաբերյալ: Նման իրավիճակում հանձնարարություն կատարող վարչական դատարանի համապատասխան նստավայրը կատարման անհնարինության վերաբերյալ կարող է կայացնել որոշում և նիստի արձանագրության, ինչպես նաև այլ նյութերի հետ միասին ուղարկել հանձնարարություն տվող դատարան:

### **Եզրակացություն**

Աշխատանքում կատարված վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ դատական հանձնարարության ինստիտուտը սուբյեկտիվ իրավունքների իրացման ապահովման երաշխիք է, որը նպատակ ունի ապահովել սոցիալ-իրավական վեճի շրջանակներում մասնավոր և հանրային շահերի ճիշտ հարաբերակցություն: Դատավարական իմաստով այն դժվար հասանելի ապացույցների ձեռքբերման և հետազոտման մեխանիզմ է, դատարանի կողմից ապացույցների անմիջական հետազոտման անհնարինության հաղթահարման միջոց, գործի քննությունը ժամանակին իրականացնելու գործիք՝ ուղղված արդարադատության արդյունավետության բարձրացմանը:

### **Գրականության ցանկ**

1. Մեղրյան Ս. Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում /Ս. Մեղրյան: Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, էջ 206:
2. Борисов А. Н. Комментарий к Кодексу административного судопроизводства РФ от 8 марта 2015 г. (постатейный)/ А. Н. Борисов, Р. П. Лагвилава. – 2-е изд., перераб. и доп.– М.: Юстицинформ, 2018. С. 132-133.

## **ADMINISTRATIVE COURT COMMISSION. THEORETICAL AND PRACTICAL ISSUES**

**Manuk Muradyan**

*PhD in Law, Associate Professor  
Police Educational Complex of RA,  
manukmuradyan@rambler.ru*

### **Abstract**

*The Chapter 8 of the Administrative Procedure Code of the Republic of Armenia (hereinafter referred to as) is dedicated to the institute of court commissions.*

*In general terms, court commission is a procedural action (assignment) carried out by an administrative court (constitutional court), stipulated by the Administrative Procedure Code of the Republic of Armenia, addressed respectively towards the administrative court in a particular location or to the administrative court, in case of assignment by constitutional court, to perform certain procedural actions in order to obtain evidence.*

*The institute of court commission is a mechanism of obtaining and examining hard-to-reach evidence. It constitutes a guarantee for ensuring the realization of procedural subjective rights. Such a power of the court (in the framework of both constitutional and administrative justice) is essentially aimed at the accurate*

*assessment of the ratio between relationship of private and public interests within the framework of the case. In general, the institute of court commission is a means of overcoming the impossibility of direct examination of evidence by the court, a tool for investigating the case in a timely manner aimed at improving the efficiency of justice.*

*The Chapter 8 of the Administrative Procedure Code of the Republic of Armenia (articles 49, 50) regulates two independent types of specific procedural structures which are fundamentally different from each other in terms of the entity issuing the commission and the respective area of proceedings. It refers to the assignment issued towards the administrative court or towards the administrative court of a respective location in the framework of the administrative court and proceedings in one case, and the constitutional court and proceedings in the other case.*

*The present article will analyze separate theoretical and practical issues of the institute of administrative court commission.*

**Keywords:** Administrative court, Administrative Procedure Code, court commission, evidence.

*Ներկայացվել է՝ 03.10.2022թ.*

*Ուղարկվել է գրախոսման՝ 02.11.2022թ.*